ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 51

Ք.ՄԱՐՏՈՒՆԻ
27.08.2024թ.

Առաջարկում եմ ավագանու քննարկմանը ներկայացնել Մարտունի համայնքի Մաղինա բնակավայրում կառուցվող կրթհամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային առաջին լսման արձանագրության արդյունքները համաձայն հանրային լսումների մասին ՀՀ կառավարության 2014թ. 1325-Ն որոշման անհրաժեշտ է տալ նախնական համաձայնություն Մաղինա բնակավայրում կառուցվող կրթհամալիրի վերաբերյալ; :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մադինա
բնակավայր, , Հեռ. 0262 6-19-90 , madinagp@rambler.ru

N 71

26 օգոստոսի 2024 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Հ.ՀՈՎԵՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովեյան

2024 թվականի հուլիսի 9-ին Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ տեղի է ունեցել հանրային քննարկում , քննարկման ժամանակ բնակիչները դրականորեն են արձագանքել կրթահամալիրի կառուցմանը :

Խնդրում ենք Ձեզ կառուցվող կրթահամալիրի շրջակա միջավայրի ազդեցության հանրային քննարկման արձանագրության վերաբերյալ հարցը ներառել առաջիկա ավագանու նիստում ,ավագանու հաստատմանը ներկայացնելու համար :

ՄԱԴԻՆԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ՄԱՐՈՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտունի համայնքի Մադինա բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում

2024թ. հուլիսի 9-ին՝ ժամը 11:00-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Նոր որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Մարտունի մամայնքի Մադինա բնակավայրի կրթահամալիրի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակ ամիջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումը (1-ին փուլ):
Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի հունիսի 5-ին, տեղադրվել է Առավոտ օրաթերթում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կայքում (atdf.am):

Ծրագրի անվանում՝ Մինչև 2026թ.-ը կառուցվող, վերակառուցվող և հիմնանանորոգվող դպրոցների ծրագիր

Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ),

Նախագծային կազմակերպություն՝ «Կապիտալ դիզային» ՍՊԸ:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Մադինա բնակավայրի վարչական ղեկավար Հ. Հայրապետյանը, ՀՏԶՀ- ից Ռուբեն Վարդանյանը, Դավիթ Եսայանը և շինարար՝ Սարգիս Ղազարյանը, ինչպես նաև բնակավայրի բնակիչներ, ուսուցիչներ:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ Մադինա վարչական բնաակավայրի ղեկավար Հարություն Հայրապետյանը, որից հետո խոսքը փոխանցեց Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից Ռուբեն Վարդանյանին :

Ռուբեն Վարդանյանը ներկայացրեց ՇՄԱԿ օրենքը և այն ,որ կրթահամալիրի կառուցումն իրականացվելու է մինչև 2026թ.-ը կառուցվող, վերակառուցվող և հիմնանանորոգվող դպրոցների ծրագրի շրջանակներում այնուհետ խոսքը փոխանցեց շինարարական կազմակերպության ներկայացուցչ Սարգիս Ղազարյանին :

Սարգիս Ղազարյանը ներկայացրեց ,որ Մադինա բնակավայրի կրթահամալիրը նախատեսվում է կառուցել միջնակարգ դպրոցի տարածքում, իսկ գործող միջնակարգ դպրոցը նախատեսվում է ապամոնտաժել: Մադինա բնակավայրի կրթահամալիրը նախատեսվում է 144 աշակերտի և կից 40-ը նախակրթարանի սաների համար: Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքեր, բացօթյա մարզահրապարակ: Ելնելով դպրոցի ֆունկցիոնալ կառուցվածքից՝ հիմնական բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր: Մուտքերի տեղադիրքերի ընտրությունն իրականացված է նաև այնպես, որ դպրոցի համալիրն ամեն ուղղությամբ ունենա առնվազն 2 էվակուացիոն ելքեր: Նախագծվող կրթահամալիրի հիմնական մուտքը նախատեսվում է 9-րդ փողոցից:

Մասնակիցները բարձրաձայնեցին իրենց հարցերը

Հարց: Որքա՞ն ժամանակահատված է նախատեսված շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու համար:

Պատասխան /Հարցին պատասխանեց շինարարական կազմակերպության ներկայացուցիչ Սարգիս Ղազարյանը / նախատեսված ժամկետը՝ երկու տարի:

Պատասխանատու՝ Մադինա վարչական բնաակավայրի ղեկավար

Հ. Հայրապետյան

Վարող Մադինա վարչական բնաակավայրի ղեկավար

Հ. Հայրապետյան

Արձանագրող՝ առաջատար մասնագետ /Մադինա բնակավայրի/

Ա. Սարոյան

Ձեռնարկող՝ <<ԲՈՒԴԼԻԴԵՐ-17>> ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղ

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով

09.07.2020

ՑՈՒՑԱԿ

	Ա.Ա.Ձ	Պաշտոն	Ստորագրություն	Հեռախոսահամար
1	[illegible]	[illegible]	[illegible]	098 [illegible] 23
2	[illegible]	[illegible]	[illegible]	077 [illegible]
3	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
4	[illegible]	[illegible]	[illegible]	094 24 18 23
5	[illegible]	[illegible]	[illegible]	094 [illegible] 21
6	[illegible]	[illegible]	[illegible]	094 [illegible] 446
7	[illegible]	[illegible]	[illegible]	094 [illegible] 2921
8	[illegible]	[illegible]	[illegible]	093 [illegible] 3287
9	[illegible]	[illegible]	[illegible]	093 [illegible] 1438
10	[illegible]	[illegible]	[illegible]	095 [illegible]
11	[illegible]	[illegible]	[illegible]	093 [illegible]
12	[illegible]	[illegible]	[illegible]	094-36-50-18
13	[illegible]	[illegible]	[illegible]	093-24-30-97
14	[illegible]	[illegible]	[illegible]	094-24-87-97
15	[illegible]	[illegible]	[illegible]	099 [illegible]
16	[illegible]	[illegible]	[illegible]	077 [illegible]
17	[illegible]	[illegible]	[illegible]	093 [illegible]
18	[illegible]	[illegible]	[illegible]	
19	[illegible]	[illegible]	[illegible]	096 [illegible]
20	[illegible]	[illegible]	[illegible]	098 [illegible]
21	[illegible]	[illegible]	[illegible]	077 [illegible]
22	[illegible]	[illegible]	[illegible]	